

ԲԻԱՅՆԱԿԱՆ ԿԱՀՈՒՑՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լ. Վ. ԵՐԱՆՅԱՆ

Վաճի թագավորության քաղաքների, ամրոցների և դամբարանների պեղումներից հայտնաբերված են բազմաթիվ գտածոներ,¹ որոնց մեջ առանձնանում է տաճարների, պալատների և բիայնական վերնախավի բնակարանների կահույքի մասերի փոքր խումբ: Սրանք մեծամասամբ զահերի, աթոռների, սեղանների դրվագազարդ և փորագիր զարդանախշով մետաղյա մասեր են: Հայտնի են նաև կենդանակերպ (ցուլի, առյուծի) բրոնզե սնամեջ ոտքեր: Վերջիցներս հազգվում էին զահերի, աթոռների, սեղանների ոտքերին: Ճավոք, դրանք գտնված են առանց փայտյա մասերի, ինչը դժվարացնում է նրանց ձևերի ճշգրտումը:

Այս առումով ավելի ընդարձակ տեղեկությունները են տալիս բրոնզե գոտիների, ցվիթատվական թիթեղների, մանյակների, հնայիլների վրա քանդակադրոշմ և գրաֆիկական եղանակով պատկերված տեսարանները: Այստեղ պաշտամունքային, ռազմաորսորդական բնույթի տեսարաններից քացի երբեմն հանդիպում են ծիսական թեմաներով տեսարաններ՝ զահերի կամ աթոռների վրա քազված աստվածների, քրմերի կամ մարդակերպ էակների մասնակցությամբ: Սովորաբար նրանց առջև պատկերված են լինում սեղաններ՝ վրան տարատեսակ անոթներ կամ զոհաբերվելիք այծեր ցվիրաբրող աստվածուհիներ:

Այս տեսարանները լրացնում են բիայնական հարուստ կահավորանքի մեր պատկերացումը և միաժամանակ հնարավորություն են տալիս վեր հանելու սեղանների, զահերի և աթոռների ձևերը, որոնք քաժանված են մի քանի տիպի:

Առաջին տիպը ներկայացված է հարթ նստուքով, չորստանի աթոռներով: Դրանց ոտքերն ու աթոռը իրար միացնող հորիզոնական շերտաձողը հաճախ զարդարվում էր մետաղյա ձվաձև տնակալներով և ատամնավոր կամ հարթ եզրերով գոտեկապերով: Սոնակալների և գոտեկապերի մասերը՝ առավել ամրոցական են ներկայացված Կարմիր բլուրի պեղումներից¹ (աղ. 1, նկ. 1): Այսօրինակ աթոռների մետաղյա մասեր հայտնաբերվել են նաև Կայալի դերեից² և Ալթին թեփեից³:

Ուշագրավ են Կայալի դերեի տաճարային համալիրից պեղված բրոնզե երեք ոտքերը: Ձևով սրանք նման են ցուլի ոտքերի՝ ցայտուն ընդգծված կճղակներով: Ծնկներից վեր դուրս են գալիս մեկական միաձույլ սնամեջ տնակալներ, որոնք, անկասկած, հնարավորություն են տալիս յուրաքանչյուր գույզը միացնել փայտյա կլորավուն ներդիրով: Բոլոր չորս ոտքերը ամուր ամրացված էին նստուքին: 2. Բարնեյը, որը պեղել է այս հուշարձանը,⁴ գտնում էր, որ դրանք եռոտանո ոտքեր են⁴, սակայն ինքն էլ կասկածի տակ է առնում այս ենթադրությունը, քանի որ այդ դեպքում ամեն ոտք պետք է ունենար ոչ թե մեկ, այլ երկու տարբեր կողմեր ուղղված սնամեջ տնակալներ: Ամենայն թափանակալությամբ աթոռն ունեցել է չորս ոտք՝ նման Կարմիր բլուրից, Կայալի դերեից և Ալթին թեփեի տաճարային համալիրից պեղված աթոռներին, տարբերվելով նրանցից միայն բրոնզե ոտքերի ձևով (աղ. 1, նկ. 2):

Երկրորդ տիպին վերագրվող աթոռ պատկերված է Ադանայի թանգարանում⁵ պահվող

Բ. Բ. Пиотровский. Кармир-блур—1. Ереван, 1950, с. 53, рис. 31. Он же: Искусство Урарту, Л., 1962, рис. 25.

² C. A. Burney, A first season of excavation of Urartian citadel of Kayalidere, Anatolian Studies, vol. XVI, Ankara, 1966, pl. XXI a, fig. 22—25.

³ R. D. Barnett and N. Gökcce, The find of Urartian Bronzes of Altintepe near Erzincan Anatolian studies, 3. Ankara, 1953, pl. XV 3, 4, 5.

⁴ A. C. Burney, the same, p. 96, fig. 29.1.

⁵ Tasyürek, The Urartian Belt in the Adana Regional Museum, Ankara, 1975, fig. 4.

քրոնզե գոտու վրա (աղ. 1, նկ. 4): Այստեղ կորավուն, շեղանկյուն և վաղաժամանակաբարդաճախված շրջանակի մեջ ձախից աջ պատկերված է հետևյալ տեսարանը. գառին բազմած ֆիգուրի առջև դրված է սեղան՝ վրան մի խոշոր անոթ: Սեղանի մոտ պատկերված է մեկ այլ մարդ, որը կարծես ճախրում է օդում: Նրա կողքին կանգնած է երկարազգեստ, գլուխը խոնարհած մեկ այլ ֆիգուր, որի առջև դրված է երկրորդ սեղանը՝ վրան երեք անոթ: Վերջին դրվագում պատկերված է երրորդ, ոչ մեծ սեղանը՝ վրան երկու անոթ: Այս վերջին, փոքր սեղանի մոտ աթոռին նստած է ձգված, աչքներում անոթ պահած մի մարդ: Վերոհիշյալ աթոռը պատկանում է աթոռների երկրորդ տիպին և ունի խաչաձևվող, ներքևում փոքր-ինչ կեռ ոտքեր և ուղիղ, ենթադրաբար գործվածքային կամ կաշեփոկավոր նստուք, թողնելով ծալովի աթոռի տպավորություն:

Հետաքրքիր է նշել, որ Ադանայի թանգարանում պահվող քրոնզե գոտու նմանակը գտնվում է Տոկիոյի Արևելքի թանգարանում⁶: Գոտիների կառուցվածքային հորինվածքը նույնն է: Նույնն են նաև մանրամասները: Որքան կարելի է դատել նկարներից, այս երկու գոտիները անհշան տարբերվում են զարդամոտիվներով: Սա թույլ է տալիս ենթադրել, որ գոտիները պատրաստվել են մի արհեստանոցում և, հավանաբար, միևնույն վաղաժամանակի ձեռքով: Չնայած նրան, որ մենք ներկայացրել ենք նաև Տոկիոյի Արևելքի հնությունների թանգարանում պահվող գոտին (աղ. 3, նկ. 3), այնուհանդերձ հետագայում հարմարության համար նշելու ենք միայն Ադանայի թանգարանում պահվողը:

Երրորդը տիպ. Լուվրի թանգարանում⁷ պահվող Գիմվիից գտնված նվիրատվական թիթեղի վրա պատկերված բարդ հորինվածքում ներկայացված է բարձր թիկնաթոռին նստած, ոտքերը գետնին չհասնող մի մարդ, որի առջև դրված է մի սեղան՝ վրան երկու անոթ: Նստած ֆիգուրին են մոտենում ձեռքերը բարձր պահած, ասես ողջունելով նրան երկու կին: Նրանցից ներքև պատկերված են ցատկոտող այծեր ու ցուլ: Տեսարանում պատկերված աթոռն ունի բարձր նստուք, ուղիղ ոտքեր, որոնք ներքևի հատվածներում զարդարված են ցուլի կնիկներով, ինչպես վերը նշված տարբեր հուշարձաններից գտնված ոտքերը: Աթոռի նկյված բարձր թիկնակը զարդարված է շրջանաձև զարդանախշով: Թիկնակի և ոտքերի միջև ընկած կողային մասը ծածկված է տախտակով և նույնպես փորագրված է շրջանաձև զարդանախշով:

Նմանատիպ թիկնաթոռ պատկերված է Մյունխենի⁸ թանգարանում պահվող, Գիմվիից գտնված մեկ այլ նվիրատվական թիթեղի վրա: Թիկնաթոռին նստած է Խալդից, որը բարձրացրած ձախ ձեռքում ոչ մեծ անոթ է պահում: Ինչպես և նախորդում, թիկնաթոռի նըստուքը բարձր է, և Խալդիի ոտքերը գետնին չեն հասնում: Խալդիի առջև դրված է սեղան՝ վրան խոշոր անոթ: Սեղանի հետևում դեպի Խալդիին է շարժվում թափոր՝ ձեռքերը վեր բարձրացրած տղամարդ ու կին: Տղամարդու ձեռքին զինանշան կա: Կինը՝ ենթադրաբար Ատուրանին, Խալդիին մի այծ է մոտեցնում: Վերջինս պատկերված է օդում, հնարավորություն տալով տեսնելու Ատուրանի ոտքերն ու հագուստը: Խալդիից դեպի թափորն է թըռչում Խալդիի կամքը հաղորդող գիշատիչ թռչուն:

Անհամեմատ բազմատեսակ են թիայնական գառերը, որոնց պատկերները պահպանվել են գլխավորապես քրոնզե փորագիր իրերի վրա: Անկասկած, այս գառերը գործածվել են բարձր խավի կողմից, քանի որ նրանց վրա հիմնականում աստվածներ են պատկերված: Այս բազկաթոռ-գառերը, իրենց հերթին, բաժանվում են մի քանի տիպի:

Առաջին տիպին են պատկանում պարզ գառերը, որի օրինակը պատկերված է Բեռլինի⁹ թանգարանում պահվող Թոփրակ կալեից գտնված արծաթյա կրծքազարդի վրա (աղ. 2, նկ. 2): Կրծքազարդի եզրերը զարդարված են կենսաց ծառերով, իսկ կենտրոնում պատկերված է գառի վրա նստած Խալդին, որի առջև կանգնած Ատուրանին նրան է մոտեցնում մի այծ: Գահը բարձր, ուղիղ թիկնակով, ոտքերը սոնակալներով միացված մի բազկաթոռ է: Գահի բարձր, հոծ արմնկալակները հասնում են Խալդիի թևատակերին:

Նմանատիպ գառ է պատկերված Բեռլինի թանգարանում¹⁰ պահվող, նույնպես Թոփրակ կալեից գտնված, ոսկե մանյակի վրա (աղ. 2, նկ. 3): Գահի վրա նստած է աստ-

⁶ Saeko Miyashita, la scene du banquet dans les ceintures urartiennes, Bullete of the Ancient Orient Museum, vol. V, Tokyo, 1982, pl. 11 13.

⁷ P. Amiet, Musée du Louvre Département des antiquités orientales Guide de visite, Paris, 1978, p. 68.

⁸ Hans—Jöus Kellner, Bronzene Weihe und votigaben Urartu ein Wiederentdecker. Fivavae Assuricus. München, 1976, auf. 52.

⁹ Б. Б. Плотровский. Искусство Урарту, рис. 49.

¹⁰ Նույն տեղում, նկ. 48:

վածուհի, ենթադրաբար, Առուբանին: Նրա առջև կանգնած է ձեռքերը վեր պարզած մի կին: Գահը նման է բարձր բազկաթոռի և ունի ուղիղ նստուք, վերը նշվածի նման հոծ, բայց ավելի ցածր արմնկակալներ: Ոտքերը տարբեր են: Եթե առաջին գահի ոտքերը ուղիղ են, ապա այս մեկինը քիչ թեք է: Սակայն նրանց գլխավոր տարբերությունն այն է՝ որ ոսկե մանյակի վրա պատկերված գահը շատ բարձր է, և գահի առջև դրված է աթոռակ, որի վրա հենվում են աստվածուհու ոտքերը:

Իր ձևով վերջիններին է նմանվում Կարմիր բլուրից գտնված արծաթյա մանյակի վրա պատկերված գահը, որի վրա նստած է աստվածուհի, իսկ նրա առջև կանգնած է մի կին՝ զոհաբերվող այծի հետ¹¹:

Երկրորդ տիպի գահեր. սրանք ունեն ավելի բարդ հորինվածք: Տոկիոյի թանգարանում¹² պահվող բրոնզե գոտու վրա պատկերված գահն ունի բարձր թիկնակ, հարթ նստուք և կիսակլոր արմնկակալներ: Թիկնակը ծածկված է փափուկ ծածկոցով, որը նրա վերին մասից մի քիչ կախվում է: Վերոհիշյալ գահերից այս մեկը հարուստ ձևավորված է: Նրա զանգվածեղ թիկնակը կողային մասում շրջանաձև փորագրություն ունի, իսկ ոտքերը առյուծի թաթերի են նման (աղ. 3, նկ. 2):

Վերը նշվածին նման է Տոկիոյի թանգարանում¹³ պահվող բրոնզե գոտու վրա պատկերված գահը (աղ. 3, նկ. 1): Այստեղ ծածկոցը նույնպես կախվում է թիկնակից, բայց ավելի երկար է և զարդարված ծոփքերով:

Նմանատիպ ծոփքավոր ծածկոցով գահ, որի վրա նստած է Խաչին, պատկերված է Գիիմլիից գտնված նվիրատվական թիթեղի վրա: Երկու տարբերություն կա առաջին երկուսի միջև. այս գահի արմնկակալներն ունեն ճկված շերտաձողի ձև, որոնց միջից երևում է աստծո իրանը:

Երրորդ տիպին վերագրվող գահ է պատկերված Ադանայի թանգարանում¹⁴ պահվող վերոհիշյալ գոտու վրա (աղ. 1, նկ. 4): Գահն ունի առանց ոտքերի նստուք: Գահին նրստած անձի ոտքերը կախված են օդում: Սակայն երևում է նկարիչը կամ մոտացել, կամ ենթադրել է ոտքերի առկայությունը, ինչպիսիք կան ուրիշ գահերի վրա: Այստեղ նորություն է թիկնակի ձևը, որը ճկվելով բարձրանում է գահի վերևում՝ ստեղծելով կլորավուն ելուստ և ծածկելով գահին բազմած մարդու գլուխը:

Առանց ոտքերի գահ է պատկերված 8—7-րդ դդ. քարե կնիքի վրա՝ պեղված Ա. Ս. Փիլիպոսյանի կողմից Նորատուսի № 22 դամբարանում¹⁵: Կնիքը փոքրիկ անցքով կշռաքարի տեսք ունի, որի ներքևի մասում պատկերված է վարզող ձի, իսկ մեջքին ծառանման պատկեր: Կողային մասում պատկերված է հետևյալ տեսարանը. ձախ կողմում երևում է կլոր գլխով, ձեռքերը առաջ պարզած նստած մարդ: Նրա առջև դրված սեղանի վրա երկվում է խաչանման առարկա: Աջ կողմում պատկերված է ծառի առջև նստած կլոր գլխով, ձեռքերը վեր բարձրացրած մեկը: Նրա դիմաց նույնպես մի սեղան կա՝ վրան կիսակլոր անոթ: Գահը պատկերված է առանց ոտքերի, ինչպես Ադանայի թանգարանի բրոնզե գոտու վրա պատկերված գահը (աղ. 3, նկ. 12):

Իր ձևով վերոհիշյալ երկու գահերին է նմանվում Տոկիոյի թանգարանում¹⁶ պահվող նվիրատվական թիթեղի վրա պատկերված գահը (աղ. 1, նկ. 3): Գահն ունի ցածր նրստուք: Նստուքն ու թիկնակը երեսպատված են փափուկ կտորով: Թիկնակի վերին մասն ունի կլորավուն ելուստ՝ զարդարված կետային, իսկ կողային մասերը՝ զիգագանման փորագրված զարդանախշով: Այս գահի վրա առկա են ոտքերը, որոնք իրար էլ են միացված շերտաձողերով:

Ավելի շքեղ է զարդարված Թոփրակ կայևում 1885—1887 թվերի պեղումների ժամանակ գտնված գահը: Ժամանակի հնահավաքներից մեկը՝ Ս. Դեզանցը, պրոֆ. Կ. Դ. Պատկանովին գրել է ոսկեզօծ գահի հատվածների մասին: Այն զարդարված է տարբեր ար-

¹¹ Նույն տեղում, նկ. 50:

¹² Saeko Miyashita, La scène du banquet dans les ceintures urartiennes. B ullete of the Anciente Orient Musoum, vol. V. Tekyo, 1983, pl. 11 13.

¹³ Saeko Miyashita, the same, pl. 1 A.

¹⁴ O. A. Tasyürek, The Urartian Bets in the Adana Regional Museum, Ankara, 1975. fig. 4.

¹⁵ Օգտվելով առիթից, ուզում ենք շնորհակալություն հայտնել Ա. Ս. Փիլիպոսյանին՝ չտպագրված նյութից օգտվելու թույլտվության համար:

¹⁶ K. Tanabe, A. Hori, T. Hayashi, S. Miyashita, K. Ishida, Studies in the Urartian Bronzes Objects from Japanese Collection (1) Balleten of the Ancient Orient Museum Vol. IV, Tokyo, 1982, pl. 36.

ձանհիկներով՝ թևավոր առյուծներով, ցուլերով, ֆանտաստիկ կենդանիների վրա կանգնած աստվածներով և այլն:

Այս բոլոր արձանիկները ոսկեգօծ են և զարդարված գունավոր քարերով ու ապակիով: Ինչպես տեսնում ենք, արձանիկները ներկայացված են կենդանիների և մարդու տարբեր մասերի համադրմամբ՝ թռչնի (թև, կտուց), ցուլի (իրան, գլուխ), առյուծի (թաթեր, մուրթ) և մարդու (գլուխ, իրան, դեմք):

Ռ. Դ. Բարնետի¹⁷ վերականգնած գահը (աղ. 2, նկ. 4) ունի չորս ոտքեր, ուղիղ նստուք և բարձր, ուղիղ թիկնակ: Ուղիղ արմնկակալները զարդարված են նստած առյուծի ֆիգուրներով և շրջանաձև դրվագազարդով, իսկ նստուքի կողային մասերը՝ վարդյակներով: Գահի ոտքերը ոչ թե ամբողջական են, այլ կազմածո: Առաջին հարկաշարքի վերադրակի վրա նստած առյուծների մեջքին կանգնած են ձեռքերը պարզած մարդիկ: Երկրորդի վրա կանգնած են թևավոր գրիֆոններ, որոնցից ներքև փորագրված ցածր ոտքեր են: Նստուքը շատ բարձր է և որպեսզի նստողի ոտքերը չկախվեն օդում, գահի առջև դրված է աթոռակ, որի կողային մասերը, ինչպես և գահինը, զարդարված են շրջանաձև նախշերով և վարդյակներով:

Ինչպես նշում է Բ. Բ. Պիտտորվսկին, այս հանդիսական գահը, որի արձանիկները գտնվում են աշխարհի մի շարք թանգարաններում, թողնում է վեհության և քարքարոս գեղեցկության տպավորություն¹⁸:

Գահը զարդարող սարսափազդու ֆանտաստիկ էակների արտահայտիչ արձանիկները ստեղծված էին սնանավատ վախ ներշնչելու և միաժամանակ չար ոգիներից գահին նստած թագավորին պահպանելու համար:

Բազմատեսակ են նաև սեղանները, որոնք նույնպես բաժանվում են մի քանի տիպի:

Առաջին տիպի սեղաններ են պատկերված Նորատուսից գտնված վերոհիշյալ կնիքի վրա (աղ. 8, նկ. 12): Սեղանները ուղղանկյուն են, ներքևի մասում քիչ նեղացող ուղիղ ոտքերով: Աջ մասում պատկերված սեղանի ոտքերը միացված են շերտաձողով, որի մասին են վկայում ոտքերի միջև երևացող գծիկները: Երկու սեղանների ոտքերն էլ մի քիչ կեռվում են, որը վկայում է այն մասին, որ ենթադրաբար ոտքերին հագցված են եղել մետաղյա ծայրակալներ:

Երկրորդ տիպին վերագրվող սեղան է պատկերված Ադանայի թանգարանում¹⁹ պահվող վերոհիշյալ բրոնզե գոտու վրա (աղ. 1, նկ. 4): Սեղանն ունի խաչաձևվող կեռ ոտքեր, որոնց ներքևի մասերը ցուլի կնիկների տեսք ունեն: Սեղանի խաչաձևվող ոտքերը մման են նույն գոտու վրա պատկերված աթոռի ոտքերին: Մակայն սեղանի վերին տախտակն ունի փորագրված գծային զարդանախշ, որը թույլ է տալիս ենթադրել, որ սեղանը ծալովի չի եղել:

Անհրաժեշտ է նշել, որ Ադանայի թանգարանում²⁰ պահվող վերը նկարագրված բրոնզե գոտու վրա պատկերված են երեք տարբեր սեղաններ. և՛ երկրորդ, և՛ երրորդ, և՛ չորրորդ տիպի սեղաններ պետք է դիտել վերոհիշյալ գոտու նույն տեսարանում (աղ. 1, նկ. 4):

Երրորդ տիպ. սրանք ուղղահայաց, ներքևում կեռ ոտքերով կլոր սեղաններ են (աղ. 1, նկ. 4):

Չորրորդ տիպ. սա ուղղանկյուն, ոչ մեծ սեղան է՝ ուղղահայաց ոտքերով, որոնց ներքևի մասերը զարդարված են առյուծի թաթերով և կետային նախշերով: Սեղանը ծածկված է ծոփապղոր ծածկոցով:

Սեղանների հինգերորդ և վերջին տիպը պատկերված է Լուվրի թանգարանում պահվող Գիիմլիի վերոհիշյալ նվիրատվական թիթեղի վրա (աղ. 2, նկ. 1): Սա քառանկյուն, ներքևում կեռ, շեղ դրված ոտքերով սեղան է: Ոտքերի ներքևի մասերն ունեն ցուլի կրճղակների ձև: Սեղանի եզրերն ունեն գծերով ու շրջանակներով փորագրված զարդանախշեր²¹: Նմանօրինակ սեղան է պատկերված Մյունխենի թանգարանում²² պահվող Գիիմլիից գտնված մեկ այլ նվիրատվական թիթեղի վրա:

Բոլոր սեղանների վրա դրված են մեկ կամ մի քանի, անկասկած, ծիսական նշանակություն ունեցող անոթներ: Որոշ սեղանների, մասնավորապես Ադանայի թանգարանում պահվող բրոնզե գոտու վրա պատկերված կլոր սեղանի վրա դրված է խոշոր, լուսան

¹⁷ R. D. Barnett. The excavations of the British Museum at Toprak Kale near Van. Iraq. XII (1950) p. 43, fig. 22.

¹⁸ Б. Б. Пиотровский. Искусство Урарту, с. 117.

¹⁹ O. A. Tasyürek, the same, fig. 4.

²⁰ Նույն տեղում:

²¹ Louis Vande Berghe. Leon de Meyer. Urartu een vergeten cultuur uit het bergland Armenie table. 21.

²² Hans—Jösg Kellner, bild. 52.

անոթ՝ անմատիպ, ավելի փոքր անոթներով, որոնք պատկերված են օդում: Նույնը դիտվում է Մյունխենի թանգարանում պահվող Գիիմլիի նվիրատվական թիթեղի վրա, որտեղ Նադիի առջև դրված սեղանին պատկերված են երեք, իրար վրա «կախված» լուսնաձև անոթներ: Այստեղ արտացոլվում են քիայնական կերպարվեստի որոշ յուրահատկություններ և, առաջին հերթին, պատկերման պայմանական տեղաշարժը, որը բնորոշ է հին եգիպտական արվեստին²³: Ներկայացնելով իրար վրա «կախված» անոթներ, հնագույն նկարիչները ձգտել են ցույց տալ առանձին անոթները, չնայած իրականում դրանք պետք է գտնվեին ներքևի ամենամեծ անոթում²⁴:

Բացի աթոռներից, գահերից և սեղաններից, մի շարք ուրարտական հուշարձաններում գտնված են կահույքի բրոնզե առանձին ոտքեր: Քանի որ, ինչպես վերը նշվեց, կահույքի մեծ մասը զարդարվում էր անմատիպ՝ ցուլի կնդակներով, առուծի ու՝ թռչնի թաթերով, հետևաբար այժմ դժվար է հաստատել, թե կոնկրետ ո՞ր տեսակին են դրանք պատկանում: Դրանից ելնելով, մենք կնկարագրենք այդ իրերի բնորոշ ձևերը, նշելով այն հուշարձանները, որտեղ նրանք գտնվել են:

Առյուծի թաթեր: Որպես կանոն, այս իրերը ուղղանկյուն են, սնամեջ և ձևավորված են ուռուցիկ ճանկերով: Հայտնի են Կարմիր բլուրից²⁵ (աղ. 3, նկ. 7) և Կայալի դերեից²⁶ (աղ. 3, նկ. 8) գտնվածները: Այդպիսի թաթեր վերջին տարիներին գտնվել են ապօրինի պեղումների ժամանակ և հնահավաքների միջոցով հայտնվել Բազելի թանգարանում²⁷: Ի տարբերություն Կարմիր բլուրից հայտնաբերված թաթերի, սրանք առջևի մասում ունեն կտրավուն բացվածք: Թաթերից վեր կան բացվածքներ՝ գունավոր քարերի տեղադրման համար: Նման կտրվածքով առյուծի թաթեր հայտնաբերվել են Ալթին թեփեում²⁸ (աղ. 3, նկ. 11):

Առյուծի թաթերից բացի հայտնաբերվել են ցուլի սնամեջ ոտքեր: Սրանց վերին մասն ունի քառակուսի բացվածք, որն արվել է կահույքի փայտյա մասերը հագցնելու համար: Այդպիսի ոտքեր գտնվել են Կարմիր բլուրում²⁹, Ալթին թեփեում³⁰ (աղ. 3, նկ. 10), Մարտունու շրջանի Գեղհույիս գյուղում³¹, Երևանի «Ավտոագրեգատ» գործարանի տարածքում պեղված դամբարանից: Վերջինս, ի տարբերություն մյուսների, պատրաստված է բարակ թիթեղից: Նման, բայց ձուլված ոտքեր զարդարել են Թոփրակ կալեում³², Կարմիր բլուրում գտնված աշտանակների ոտքերը:

Բացի վերը նշվածից, ուրարտական հուշարձաններում հայտնաբերվել են բազկաթոռ-գահերին պատկանող փայտյա մասեր: Այսպես, Ալթին թեփեում գտնվել են փայտյա իրերի բեկորներ: Դրանց մի մասը զարդարված է բրոնզե գամերով, որոնք կտր գլխիկները ստեղծում են յուրօրինակ ժապավենաձև նախշ: Այս իրերի մեջ առանձնանում են գահի փորագիր ոտքեր³⁴ (աղ. 3, նկ. 6) և գահի մաս կազմող ուղղանկյուն մի բեկոր, որը ձողի միջոցով միանում է փայտյա երկու ոտքերին: Ուշագրավ է Վանում գտնված բրոնզե քառակուսի սնամեջ անկյունակապը, որը միացրել է գահի փայտյա մասերը: Այս բրոնզե անկյունակապերը ներսի կողմից հարթ են, իսկ դրսից փորագրված են արմավանախշերով ու վարդյակներով³⁵:

Բացի փորագրությունից և քարձրաքանդակից, ուրարտական կահույքը նաև դրվագա-զարդվել է, որը, մեր կարծիքով, առնչվում է ոչ այնքան աթոռների, գահերի ու սեղանների, որքան կահույքի այլ ձևերի, ենթադրաբար, պահարանների կամ, ավելի հավանական է, որմնախորշերը փակող դռակների հետ, որոնք հաճախ են հանդիպում քիայնական բնակատեղիներում, տաճարներում և դամբարաններում: Այսպես, Կարմիր բլուրի № 3 սենյակից գտնվել են երկու փայտյա ձողեր՝ դրվագազարդված եղջյուրով: Դրվագազարդում

²³ Б. В. Гаушенбах. Пространственное изображение Урарту. М., 1980, с. 28.

²⁴ С. А. Есаян. Искусство портретного изображения Урарту,

«Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 3, էջ 187:

²⁵ Б. Б. Пиотровский. Кармир Блур (альбом), Л., 1970, с. 77.

Paris B. Piotrovski. Urartu negel verland München—Genf—Paris. 1969. fig. 109.

²⁶ Azarpy. Z. Urartian Arts and Artifacts Archeological study 1968, p. 62.

²⁷ Louis Vande Berghe en Leon Meyer, alb. 132, 133, 134.

²⁸ Tahsin Özguc. Altintepe 11 pl. XXII.

²⁹ Б. Б. Пиотровский. Ванское царство, ряс. 42.

³⁰ Tahsin Özguc. Altintepe 11 pl. XXII.

³¹ Ա. Ս. Փղիպոսյանի պեղումները: Նյութը պատրաստ է տպագրության:

³² Б. Б. Пиотровский. Ванское царство, с. 174, ряс. 75.

³³ Б. Б. Пиотровский. Кармир Блур (альбом), ряс. 72.

³⁴ Tahsin Özguc. Altintepe pl. XXII.

³⁵ R. D. Barnett. The excavations of the British Museum, pl. II—IV.

էին բարակ շերտով, շեղանկյուն, շրջանաձև, եռանկյուն, քառակուսի և «ծիծեռնակի պոչի» ձևով³⁶: Այդ է վկայում նաև Թուփրակ կալեուս³⁷ գտնված 15 սմ լայնություն ունեցող բրոնզե մի բեկոր՝ զարդարված ուղղահայաց կանգնած, ձեռքերը վեր բարձրացրած, թևավոր ֆիգուրներով: Նրանք պատկերված են երկար զգեստներով, որոնց եզրերը զարդարված են ծոփքերով, և բարձր գլխարկներով: Ֆիգուրները իրարից բաժանված են ուղղահայաց, լայն բոլորանախշով:

Բիսյանական թագավորության մեջ, քացի սեղաններից, աթոռներից և գահերից, ենթադրաբար գործածական են եղել նաև կահույքի այլ մասեր, մասնավորապես, թախտ-մահճակալներ, որոնք մինչև այժմ չեն հանդիպում ուրարտական կերպարվեստում: Այսպիսի ենթադրություն թույլ են տալիս անելու ասորական կերպարվեստում պատկերված մահճակալները. մասնավորապես, այդպիսի մի թախտ-մահճակալ պատկերված է Աշուր-ճասիրպալի Նիմվեի բարձրաքանդակում³⁸: Այդ մասին անուղղակի տեղեկություններ են տալիս Հայաստանի ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների դամբարաններից (Օշական, Լճաշեն, Արթիկ, Ցամաքաբերդ) գտնված հուղարկավորման մահճները: Սրանք ունեն կարճ ոտքեր և կաշեփոկավոր նստուք և, անկասկած, խոսում են այն մասին, որ նման թախտ-մահճակալները կիրառվել են նաև կենցաղում:

Եթե հաշվի չառնենք արտաքին զարդանախշերը, քիսյանական կահույքը նմանվել է հին արևելյան կահույքին: Այսպես, խաչանկվող ոտքերով ծալովի աթոռներ հայտնի են Ասորեստանում: Սարգոն 2-րդի կողմից Մուսասիրի տաճարի ավերման տեսարանում ավարը գրանցող պաշտոնյան նստած է նմանատիպ աթոռի վրա³⁹:

Կարճ թիկնակներով աթոռներ հանրահայտ են նորբաբելոնյան շրջանում: Նմանատիպ աթոռ է հայտնի Կարմիր բլուրի № 5 սենյակից գտնված կնիքի վրա: Բ. Բ. Պիտոբովսկու ենթադրությամբ, կնիքի վրա պատկերված է գահի վրա նստած Իշտարը: Նրա երկու կողմերում պատկերված են զինանշաններ. առջևում կանգնած է թագավոր կամ քուրմ, ետևի մասում պատկերված է առասպելական էակ, որի գլխավերևում կա աստղ և կիսալուսին: Այն իր կատարողական տեխնիկայով հիշեցնում է բաբելոնյան քարաքանդակության օրհնակները, քայց չի բացառվում նրա ասորական ծագումը: Գահը, որի վրա նստած է Իշտարը, ունի ուղիղ, նեղ նստուք, կարճ թիկնակ, ուղղահայաց դրված ոտքեր, որոնք ներքևի մասում միանում են շերտաձողերով⁴⁰:

Կարճ թիկնակով աթոռներ պատկերված են բաբելոնյան մի շարք այլ կնիքների վրա, չնայած նստուքի ձևերի տարբերությանը: Մեծ մասամբ դրանք ուղիղ են խաչանման կամ բազմաշարք շերտաձողերով կամ էլ ոտքերը միացրած են ուղիղ վերադրակով և ուղղահայաց հենակներով⁴¹:

Ասորական և սիրո-խեթական արվեստում առավել տարածված էին բարձր աթոռները կամ գահերը, որոնց մոտ դրվում էին աթոռակներ: Հետաքրքիր է նշել, որ խեթերի «մեծ ժողովի» տոնական ծեսի ժամանակ, երբ թագավորը մտնում է «մեծ տուն» (տաճար) և բազմում գահին, պալատական ծառաները նրա ոտքերի տակ աթոռակ էին դնում և ծնկները գործվածքով ծածկում⁴²:

Այն հանգամանքը, որ վերոհիշյալ պատկերներում ոչ քոլոր գահերի մոտ կան աթոռակներ, հնարավորություն է տալիս եզրադրելու, որ ինչպես խեթերի, այնպես էլ քիսյանացիների մոտ դրանք կիրառվել են ծիսական արարողությունների ժամանակ և ունեցել են որոշակի խորհուրդ:

Այդպիսի աթոռներ կամ գահեր հայտնի են Աշուրճասիրպալի Նիմվեի⁴³ և Կուլումջիկի Սենեքերիթի ռազմական ճամբարը պատկերող բարձրաքանդակում⁴⁴, Սամ Ալայի⁴⁵ սիրո-խեթական բարձրաքանդակում, Բիրլուսի արքա Աքերամի⁴⁶ սարկոֆագի վրա:

³⁶ Б. Б. Пиотровский. Кармир блур 1, Ереван, 1950, с. 53, рис. 13.

³⁷ R. D. Barnett. More Addenda From Toprak Kale. Anatolian Studies, 22, Ankara, 1972, p. 171, fig. 14.

³⁸ R. D. Barnett. Assyrische Palastreliefs PRA GU9 Artia, p. 31, fig. 105.

³⁹ Б. Б. Пиотровский. Искусство Урарту, рис. 8.

⁴⁰ Б. Б. Пиотровский. Кармир блур 1, Ереван, 1950, с. 79.

⁴¹ Briggs Buchanan, Early Near Eastern Seals in the Yale Babylonian Collections Haven and London, Yale University Press, 1981, № 327.



⁴² В. Г. Ардзиева Ритуалы и Мифы древней Анатолии, М., 1982, с. 59.



⁴³ R. D. Barnett. Assyrischen Palastrelief, auf. 31, Bild. 47.







⁴⁴ Н. О. Флитнер. Культура и Искусство Двуречья. II.-М., 1958, с. 202.

⁴⁵ В. А. Афанасьева. И М. Дьяконов. Искусство Передней Азии середины II—I тыс. д. н. э. В книге: Памятники мирового искусства. М., 1978, рис. 225

⁴⁶ Н. О. Флитнер, указ. соч., с. 257.







Բարձր ու ցածր թիկնակով, խաչաձևվող կամ ուղիղ ոտքերով աթոռներ հայտնի են նաև նորբաբելոնյան շրջանի բարաքանդակում: Այստեղ նույնպես դիտվում են բարձր նստույք և ոտքերի մոտ դրված աթոռակներ:

Ջուգաթեռներ կան նաև ուրարտական և ասորական, խեթական և բաբելոնյան կահույքի այլ տեսակների՝ սեղանների միջև: Այսպես, Ասորեստանում հայտնի են խաչաձևվող ոտքերով սեղաններ, մասնավորապես այդպիսի մի սեղան է պատկերված Աշուրնասիրպալի⁴⁷ Նիմրուդի բարձրաքանդակի տեսարաններից մեկում: Սեղանի ոտքերը ճուրի ոտքերի են նման: Հայտնի են նաև ուղղանկյուն սեղաններ՝ ծածկված, ուրարտական որոշ սեղանների նման, ծուփքավոր ծածկոցով⁴⁸: Այդպիսի սեղան է դիտվում նաև Կույունջիկի բարձրաքանդակի⁴⁹ Սենեբերիի ռազմական ճամբարը պատկերող տեսարանում: Կլոր, ներքևում կեն ոտքերով սեղաններ կան Սամ Ալայի⁵⁰ վերոհիշյալ բարձրաքանդակում և բաբելոնյան կնիքի վրա⁵¹:

Ուրարտուից տարված հարուստ ավարի մեջ երբեմն հիշատակվում է կահույք, որը, համաձայն ասորական աղբյուրների, ճոխ զարդարված է եղել: Այսպես, Աշուրնասիրպալ 2-րդ Թուշխանի արձանագրությանը մեջ հայտնում է Բիթ-Ջամանիում գրավված փայտյա սեղանների և փղոսկրով ու ոսկով զարդարված զահի մասի⁵²: Սարգոն 2-րդը, տեղեկացնելով Մուսասիրի գրավման մասին, հիշատակում է փղոսկրով, քարերով ու ոսկով զարդարված արծաթյա մահճակալ՝ աստվածային արքայի հանգստի համար և տաս տոսախեն (շիմշատեն) սեղաններ, զահեր՝ զարդարված փղոսկրով և ոսկով⁵³:

Ուրարտական կահույքի պատրաստման համար օգտագործել են փայտի տարբեր տեսակներ, ինչպես ամուր՝ ոտքերի և թիկնակի, այնպես էլ ճյուղ՝ կոր մասերի, հատկապես արմնկակների համար: Կահույքի տարբեր մասերի միացման համար կիրառվել են փորակներ, ագույցներ, կլորավուն բացվածքներ, փորագրված անկյունակապեր, սղոնակապներ և այլն: Լայն կիրառություն է ունեցել մետաղի, եղջյուրի, ապակու և ոսկու դրվագազարդումը: Վանից գտնված զահի օրինակով կարելի է ասել, որ առավել շքեղ արքայական զահերը հաճախ զարդարվում էին երևակայական կենդանիների և մարդկանց արձանիկներով, որոնց աչքերը դրվագազարդվում էին գունավոր քարերով:

Կահույքի պատրաստման համար օգտագործվում էին կացիններ,՝ սղոցներ, դուր, մեծ խարտոց, գայլիկոն: Ոչ մեծ դետալների պատրաստման համար օգտագործել են ատաղձագործական դազգահ:

Կահույքի ձևերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ասելու, որ եթե ցածր խալի համար պատրաստված կահույքը զուտ ատաղձագործական իր էր, ապա վերնախավի օգտագործման կահույքի համար ներգրավվում էին ինչպես բարձրակարգ հյուսններ և ատաղձագործներ, այնպես էլ քանդակագործներ, փորագրիչներ, ոսկերիչներ, որոնք ստեղծում էին բարձրաժեռ գեղարվեստական գործեր՝ ծառայելու ինչպես գեղեցիկին, այնպես էլ իրենց տիրոջը պահպանելու չար ոգիներից:

Ղ. В. АБАДЖЯН.—О некоторых формах бийниской мебели.—При раскопках городов, дворцов, храмов Ванского царства наряду с многочисленными находками различных изделий найдена также небольшая группа предметов, являющихся талаями мебели.

Более подробную информацию о бийниской мебели дают предметы изображительного искусства в виде гравированных изображений на бронзовых пласках, votивных пластинах, медальонах, амулетах и т. д. Анализ этого материала позволяет выявить наиболее часто встречаемые формы бийниской мебели—столов, стульев, тронов и производить их классификацию, а также сравнить их с формами древневосточной мебели.

⁴⁷ R. D. Barnett. Assyrischen Palastrelief, 38. Bild. 97, 98.

⁴⁸ Götter und Menschen (Text D. J. Wiseman) ARTIA 1950, Bild. 25, 26, 46, 60, 80, 81, 93...)

⁴⁹ R. D. Barnett Auf. 31, Bild. 47.

⁵⁰ Н. О. Флитнер, Сзқ. աշխ.:

⁵¹ Götter und Menschen (Text D. J. Wiseman) ARTIA Bild. 81.

⁵² И. М. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту (АВИИУ. 26, об. 36), Вестник древней истории, 1951, № 2, с. 292.

⁵³ АВИИУ 376 (ВДИ), 1951, № 2, с. 337.